**քաղ. Երևան**

14/4.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 3/3.8-2/84951-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ՀՔ/22/8702-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N ԱԱ/3-6/6693-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի (4 տեղ, 140.6 կգ ընդհանուր քաշով, 24755.25 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1120.54 եվրո, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

14/4.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.09.11թ. № 3/3.8-2/84951-11

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.09.2011թ. N15/15.6/15470-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հաացեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N4) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

22.09.11թ.

№ 034/28497-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

14/4.4

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

22.09.11թ. N ՀՌ/22/8702-11

Ձեր N ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.09.2011թ. թիվ 15/15.6/15470-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (4)» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

*Դեղորայքային քաղաքականության բաժին*
*Կատարող Ա.Մկրտչյան*
*հեռախոս 52 27 21*

22.09.11թ

№ 020/28464-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/4.4

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

20. 09. 11 թ.

№ ՀՀՀ/3-6/6693-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 20-ի համար 15/15.6/15470-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին> որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

կատարող՝ Վ. Սարգսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

22. 09. 11

№ 044/28415-11

---

МИНИСТЕРСТВО
ЗДРАВООХРАНЕНИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РЕСПУБЛИКАНСКИЙ ЦЕНТР
ГУМАНИТАРНОЙ ПОМОЩИ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF HEALTH
REPUBLICAN CENTRE OF
HUMANITARIAN ASSISTANCE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ 14/4.4

ք. Երևան Նոր-Արեշ-35
հեռ. 472111, 470621
էլ. փոստ: anmohk@mail.ru

г. Ереван Нор-Ареш-35
тел. 472111, 470621 06

N 228 23.09.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
Համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումնը մեր թիվ 226 առ 17.09.2011թ-ի գրության տեղեկացնում եմ Ձեզ, որ ԱՄՆ ՄՀՀ shipment 203-ով ուղարկված բեռի ժամանել է Երևան 20.09.2011թ-ին:

Բեռի փաստացի տվյալներն են .

1. Բեռի արժեքը 24755, 25Եվրո
2. Տրանսպորտային ծախս 1120.54 Եվրո

Խնդրում եմ որոշման մեջ օգտագործել վերոնշյալ տվյալները:

Կից ներկայացվում է Հաշիվ-ապրանքագիր և ավիոբեռնագիր:

Առդիր 3 էջ:

Տնօրեն Վ. Դավթյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտք թիվ 020/28621
«23» 09 2011թ.

Կատարող՝ Ա. Հոսեփյան
հեռ. 47-21-11

**Baxter**

BAXTER HEALTHCARE SA ***AUSTRIAN VAT NUMBER ******
VAT# ATU50489608
THURGAUERSTRASSE 130
CH 8152 GLATTPARK / OPFIKON - SWITZERLAND

Document Date: 14/09/11
Invoice Number: 12477227
Payment Terms:

Sold To: VERKAUFSFOERDERUNG ARMENIA
BAX800/002177
AM . ARMENIA
Tl/Fx:
VAT#
Country of final destination: ARMENIA

Forwarder:

Ship ref: 31222

c/f 020885 38743 ... 20.09.11

Consignee: Ministry of Health
BAX800/002177/003 Republican Center of Humanita
35 Nor Aresh/Yerevan/ARMENIA
Attn: Mr. Vardan Daveyan
Phone: 011-37410-47- AM ARMENIA

Mode: AIRFREIGHT
Order No: 000228733
Cust. Ref: 141106
Steamship Line:
Shipping Terms: C.I.P.

ETD: 19/09/11
ETA: 0/00/00
VOY/FLT:
AWB/BL:
Booking #:
Seal#:
Vessel:
Cont#:
Port of Departure:

| Item Number | DESC | Requested Date | UOM | Quantity Shipped | Unit Price | Discount Value | Extended Price | Vat% | VAT Amount |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | JDE Nr: 000886<br>CIP AIRPORT YEREVAN | | | | | | | | |
| E3003030111008 | ANTITROMBINA III IMMUNO 1 500UI<br>Lot Number: VNB1J008<br>Pack Factor: 1EA Origin: Austria<br>Lot Number: VNB1J008<br>P: AD<br>ANTITHROMBINA III 1500 UI/30ml<br>Customs tariff no. 30021091 | 19/09/11 | EA | 250<br>Expiry date: 31/03/12 | 0,0000 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,0000 |

Total for Sales Order: 000228733 EUR 0,00 0,00
Cust. Ref: 141106

Vat%:
Basis: EUR 0,00 0,00
Vat:

Total: C.I.P. EUR 0,00

WITHOUT COMMERCIAL VALUE

TOTAL VALUE FOR CUSTOMS PURPOSES ONLY:
24.755,25
DONATION - HUMANITARIAN AID SUPPLY

**Original**

Proforma Invoice

**Baxter**

BAXTER HEALTHCARE SA ***AUSTRIAN VAT NUMBER ******
VAT# ATU50489608
THURGAUERSTRASSE 130
CH 8152 GLATTPARK / OPFIKON - SWITZERLAND

Document Date: 14/09/11
Invoice Number: 12477227
Payment Terms:

Sold To: VERKAUFSFOERDERUNG ARMENIA
BAX800/002177
AM . ARMENIA
Tl/Fx:
VAT#
Country of final destination: ARMENIA

Forwarder:

Ship ref: 31222

Consignee: Ministry of Health
BAX800/002177/003 Republican Center of Humanita
35 Nor Aresh/Yerevan/ARMENIA
Attn: Mr. Vardan Daveyan
Phone: 011-37410-47- AM ARMENIA

Mode: AIRFREIGHT
Order No: 000228733
Cust. Ref: 141106
Steamship Line:
Shipping Terms: C.I.P.

ETD: 19/09/11
ETA: 0/00/00
VOY/FLT:
AWB/BL:
Booking #:
Seal#:
Vessel:
Cont#:
Port of Departure:

| Item Number | DESC | Requested Date | UOM | Quantity Shipped | Unit Price | Discount Value | Extended Price | Vat% | VAT Amount |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Cost Center No. 9190 44826 | | | | | | | | |

Baxter Healthcare S.A
Thurgauerstrasse 130
CH-8152 Glattpark (Opfikon)

Please credit our account of : Deutsche Bank AG CH - Zurich IBAN : CH8987801001000102002 Swift: DEUTCHZZ Account: 01000102002

**Original**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**սեպտեմբերի 2011 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/84590-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N ՀՔ/22/8502-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԱ/3-6/6543 և Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի սեպտեմբերի-ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (20տեղ, 3593 կգ ընդհանուր քաշով, 61710 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6945 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N4)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջարկության վերաբերյալ** | |
| Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N4)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում եմ.<br>փոփոխել ներմուծվող բեռի արժեքը և փոխադրման ծախսերը՝ «33879.60 ԱՄՆ-ի դոլարին» և «1524 ԱՄՆ-ի դոլար» բառերը համապատասխանաբար փոխարինել «24755.25 եվրոյին» և «1120.54 եվրո» բառերով՝ հիմք ընդունելով ճշտված ապրանքագրի տվյալները: | Որոշման նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները՝ հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 228 գրությամբ ներկայացված ճշտված ապրանքագրի տվյալները: |

Փ/Ա-2011/33/35114 ներմուծված ապրանքների ցանկ

| ԴԴ | Անվանում | քանակ /հատ/ | տեղ | քաշ բրուտո /կգ/ | քաշ նետո /կգ/ | արժեք /ԱՄՆ $/ | ծագ. երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Քայլակ | 116 | 5 | 987 | 800 | 5300 | Չին. |
| 2 | Դենակ | 45 | 1 | 124 | 100 | 1016 | Չին. |
| 3 | Աթոռ պլաստ | 1 | 1 | 5 | 4 | 40 | ԱՄՆ |
| 4 | Կշեռք Denento | 5 | | 47 | 45 | 500 | ԱՄՆ |
| 5 | ԿոմպրեսորPN -15 | 1 | | 15 | 15 | 60 | ԱՄՆ |
| 6 | Սպիտակեղեն օգտ.գուլպա | 750 | 1 | 224 | 198 | 4300 | ԱՄՆ |
| 7 | Ներարկիչ | 20 212 | 1 | 226 | 200 | 7000 | Չին |
| 8 | Տակդիրներ | 670 | 1 | 230 | 115 | 1086 | Չին. |
| 9 | Կատետրներ | 960 | 2 | 350 | 320 | 13000 | Չին. |
| 10 | Օրթոպետիկ պարագաներ | 164 | 3 | 450 | 430 | 5640 | ԱՄՆ |
| 11 | Անձեռոցիկ | 22180 | 1 | 183 | 158 | 12719 | ԱՄՆ |
| 12 | Բժշկ.անալիզի տարաներ | 400 | 1 | 150 | 135 | 1821 | Չին. |
| 13 | Կեղտընդունիչներ /գիշերանոթ/ | 75 | | 30 | 20 | 50 | Չին. |
| 14 | Խնամքի պարագաների հավ. առաջին օգնություն | 383 | 2 | 330 | 307 | 5000 | ԱՄՆ |
| 15 | Միանգամյա ծածկոցներ թղթ | 1000 | 1 | 140 | 120 | 2919 | ԱՄՆ |
| 16 | Ներարկիչներ 30մլ | 450 | | 17 | 14 | 400 | Չին. |
| 17 | Նորածնի թևնոց | 200 | | 55 | 5 | 108 | Չին |
| 18 | Կատետրների հավաքածու | 91 | | 13 | 9 | 600 | Չին |
| 19 | Բոբրովի ապար.դույլ | 20 | | 12 | 10 | 81 | ԱՄՆ |
| 20 | Թաց անձեռոցիկ | 7 | | 5 | 3 | 70 | ԱՄՆ |
| 21 | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 20 | 3593 | 3016 | 61710 | |

"Քանաքեռ-Զեյթուն" ԲԿ.ՓԲԸ

Տնօրեն Գ.Գ.Ստամբոլցյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

14/4.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.09.11թ. № 3/3.8-2/84590-11

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. N15/15.11/15182-11 գրությամբ ներկայացված Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

15.09.11թ.

№ 034/27896-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

14/4.5

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

17.09.11 N 270/22/8502-11

Ձեր N ______________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. թիվ 15/15.11/15182-11 գրության կապակցությամբ՝ «Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն ԲԿ» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝ Ա.Մկրտչյան
Հեռախոս 52 27 21

17.09.11թ.

№ 020/28089-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/4.5

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

15.09.11թ.
№ ՇՀՀ/3-6/6543-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 14-ի համար 15/15.11/15182-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

15.09.11թ.
№ 044/27881-11

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**2011 թվականի N Մ- -Ա** 14/4.6
**քաղ. Երևան**

**«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի -ի N ԱՊ/ԱնՄ-5/ -11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մարիամ Ալբերտի Իգիթյանի կողմից «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված օգտագործված հագուստի (900 կգ ընդհանուր քաշով, 198 եվրո արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 500 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է օգտագործել մանկատան երեխաների կարիքները հոգալու համար:

2. «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

14/4.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.09.11 №3/3.8-2/84588-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.09.2011թ. N15/15.1/15073-11 գրությամբ ներկայացված «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/27894-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/4.6

«14» 09 2011 թ. N ՖԲ/ԼԽԵՐ-5/7492-11

Ձեր 2011-09-20, 15/15.1/15073-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝** **Ֆ. Բերիկյան**

040/27748-11

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.56-34-91

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/4.6

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԱ/3-6/6481-11
13.09.11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 13-ի համար 15/15.1/15073-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

044/27687-11

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

14/4.7

**«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Բավարիայի երկրամասի Կարմիր Խաչի կողմից Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքի, բժշկական պարագաների և այլ ապրանքների (14000 կգ ընդհանուր քաշով, 50000 եվրո ընդհանուր արժեքով, ներառյալ բեռնափոխադրման և այլ ծախսերը, «Գուգարք» տարածաշրջանային մաքսատուն, բաշխման ցանկը կցվում է) ներմուծման ծրագիրը:

2. Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

14/4.7

Հաստատում եմ` Ստեփանավանի «Վերածնունդ» Բ/Հ
Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Ռ. Քոչարյան

ՑՈՒՑԱԿ

14/4.7

Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ներմուծված ապրանքների բախշման

| Անվանումը | Չափի միավոր | Քանակը | Արժեքը եվրո | Ստացող Կազմակերպությունների անվանումը |
|---|---|---|---|---|
| դեղորայք ըստ արտահանման երկրի մասնացուցակ «Aufstellung Medikamentenspende»-ի | արկղ | 298 | 20650 | «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ |
| Ներկ ջրային լուծույթում | դույլ | 90 մեծ 81 փոքր | 8400 | Ստեփանավանի քաղաքապետարան թիվ 2, 3, 4 մանկապարտեզներ, սպորտդպրոց, գրադարան |
| Երկանիվ հեծանիվ օգտագործած | հատ | 6 | 250 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններ թիվ 1 մանկ. - 2 հատ թիվ 2 մանկ. – 1 հատ թիվ 3 մանկ. – 1 հատ թիվ 4 մանկ. – 2 հատ |
| Հաշմանդամի սայլակ օգտագործած | հատ | 4 | 760 | Ստեփանավանի քաղաքապետարան, ըստ սոցիալական ծառայության տրված ցուցակի |
| Մեկ տեղանոց ներքնակ օգտագործած | հատ | 12 | 720 | Թիվ 1, 3 նախադպրոցական հաստատություններին թիվ 1 մանկ. - 8 հատ թիվ 3 մանկ. – 4 հատ |
| Հյուքի ապակյա բաժակներ | տուփ | 43 | 810 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին թիվ 1 մանկ. - 15 հատ թիվ 2 մանկ. – 6 հատ թիվ 3 մանկ. – 10 հատ թիվ 4 մանկ. – 12 հատ |
| Թեյի կերամիկական բաժակներ | հատ | 360 | 280 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին թիվ 1 մանկ. - 120 հատ թիվ 2 մանկ. – 40 հատ թիվ 3 մանկ. – 90 հատ թիվ 4 մանկ. – 110 հատ |
| Խանձարուրներ հիվանդների համար | տուփ | 138 | 5400 | Ստեփանավանի քաղաքապետարան, ըստ պոլիկլինիկայի տրված ցուցակի |
| Պոլիմերային պարկեր աղբահանության համար | տուփ | 166 | 8150 | Ստեփանավանի քաղաքապետարան, շաբաթօրյակների միջոցով քաղաքի և համայնքի վարչական տարածքի հանգստյան գոտիների սան-մաքրման աշխատանքների նպատակով |
| Մակարոն | տուփ | 962 | 4580 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին թիվ 1 մանկ. - 300 թիվ 2 մանկ. - 162 թիվ 3 մանկ. - 200 թիվ 4 մանկ. - 300 |

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

14/4.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

13.05.11 №3/13.8-2/8444-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.09.2011թ. N15/15.1/14915-11 գրությամբ ներկայացված Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է պարզաբանել բեռների բաշխման ցուցակում ընդգրկված Ստեփանավանի քաղաքապետարանին հաշմանդամի սայլակների, հիվանդների համար խանձարուրների և ներկի հատկացման նպատակը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/27671-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

14/4.7

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

9.09.11 N ԷԴ/22/8258-11

Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.09.2011թ. թիվ 15/15.1/14915-11 գրության կապակցությամբ՝ «Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝ Ա.Մկրտչյան
Հեռախոս 52 27 21

020/27434-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 14/4.7

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԱ/3-6/6525-11
15.09.11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 8-ի թիվ 15/15.1/14915-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով բեռի ներմուծման ծրագրի մասին> որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ բաշխման ցանկը լիարժեք չէ: Մասնավորապես. նախադպրոցական հաստատություններն ենթակա են անվանական նշման, ինչպես նաև պետք է նշվի ըստ շահառուների բաշխման քանակները: <<Ստեփանավանի կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ-ն հանել շահառուների ցանկից՝ համաձայն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի մասին N 66-Ն որոշման հավելված N 2-ի 4-րդ կետի:

Ծրագրի բարեգործական որակելը նպատակահարմար ենք գտնում վերը նշված պահանջները բավարարելուց հետո:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/27806-11

կատարող՝ Վ. Սարգսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 14/4.7

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
4-61-92
Fax 2-28-77

թիվ 101/104.3/4894-11
«14» 09 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 08.09.2011թ. թիվ 15/15.1/14915-11 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում Բավարիայի երկրամասի Կարմիր Խաչի կողմից «Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի /դեղորայք, բժշկական պարագաներ և այլ ապրանքներ/ ներմուծման ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

114/27694-11

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

# ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

14/4.7

1901 ք. Ստեփանավան, Միքոյնյան 4
E-mail : veracnund@rambler.ru

(374-256) - 22-457
ֆաքս - 22-233

«20» սեպտեմբերի 2011թ.

թիվ 09

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Բավարիայի երկրամասի Կարմիր խաչի կողմից Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով, որպես մարդասիրական օգնություն ստացվել է բեռ՝ 14000 կգ ընդհանուր քաշով, 50000 եվրո ընդհանուր արժողությամբ (համաձայն կից բեռնագրի), որից դեղորայքը (1.490 կգ ընդհանուր քաշով, 20650 եվրո ընդհանուր արժողությամբ) հասցեագրված է «Ստեփանավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

Բեռը 20.08.2011թ. C 1876 մաքսային հայտարարագրով ձևակերպվել է «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով և համապատասխան մաքսային ձևակերպումները կատարվել են «Գուգարքի» տարածաշրջանային մաքսատանը:

Խնդրում եմ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշումը՝ բեռը հումանիտար ճանաչելու մասին:

Հոգաբարձուների խորհրդի կողմից վերանայվեց պետական եկամուտների կոմիտեի և ֆինանսների նախարարության կողմից բարձրացված դիտողությունները, ներկայացնում ենք ներմուծվող ապրանքների բախշման ճշտված ցուցակը:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԲՀ-Ի ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

2017

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ... 
N 094/28787
«26» 09 2011թ.

14/4.7

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 13.09.11, N 3/3.8-2/84441-11 | |
| 1. Անհրաժեշտ է պարզաբանել բեռների բաշխման ցուցակում ընդգրկված Ստեփանավանի քաղաքապետարանին հաշման-դամի սայլակների, հիվանդների համար խանձարուրների և ներկի հատկացման նպատակը: | 1. Կցված է կազմակերպության պարզաբանումը և լրամշակված բաշխման ցանկը |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 15.09.11, N ԱԱ/3-6/65251-11 | |
| 1. Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ բաշխման ցանկը լիարժեք չէ | 1. Կցված է կազմակերպության պարզաբանումը և լրամշակված բաշխման ցանկը |

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** 14/4.8
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N 3/3.8-2/84718-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N 3/3-6/6598-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) էլեկրական հոսանքի խրոցային բաժանարարներ և մալուխներ (մեկ տեղ, 57 կգ ընդհանուր քաշով, 2104.36 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 313.74 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

2) էլեկրոնային սարքավորումներ և ներքին հեռախոսային ցանցի մասեր (6 տեղ, 81.2 կգ ընդհանուր քաշով, 4492.68 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

3) դյուրակիր համակարգիչներ՝ iPad2 (30 հատ՝ 3 տեղ, 40.82 կգ ընդհանուր քաշով, 18870 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1398 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

4) հիշողության քարտեր և ինտերակտիվ գրատախտակներ (4 տեղ, 29.03 կգ ընդհանուր քաշով, 4715 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1230 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

5) թվային ֆոտոխցիկներ (30 հատ՝ մեկ տեղ, 28.12 կգ ընդհանուր քաշով, 13170 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 974 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

6) ապակյա տարաներ (սրվակներ 500 հատ՝ մեկ տեղ, 10.43 կգ ընդհանուր քաշով, 395 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 380 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

 14/4.8

7) ինքնակպչուն պոլիմերային թաղանթներ (6 գլանափաթեթ՝ մեկ տեղ, 134 կգ ընդհանուր քաշով, 1294.80 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1800 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

8) մետաղյա հիմքով աթոռներ, սեղաններ և հագուստի կախիչներ (150 տեղ, 1258 կգ ընդհանուր քաշով, 8343.04 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1134000 դրամ, «ՄՃՓ» ՏՄ).

9) լապտերներ (10000 հատ՝ 10 տեղ, 248 կգ ընդհանուր քաշով, 5000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ).

10) ձեռքի պլաստմասե օղակներ (10000 հատ՝ 7 տեղ, 158.76 կգ ընդհանուր քաշով, 10000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ).

11) տեսաձայնային սարքավորումներ և խաղային սարքեր ու պարագաներ (9 տեղ, 230.43 կգ ընդհանուր քաշով, 15647 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ).

12) մետաղյա հիմքով հոլովակավոր աթոռներ և հեռուստացույցի պատի կախիչներ (41 տեղ, 380 կգ ընդհանուր քաշով, 5498.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 450 ԱՄՆ-ի դոլար և 52058 դրամ, «Արարատյան» ՏՄ).

13) գրասենյակային կահույք (194 տեղ, 3854 կգ ընդհանուր քաշով, 30418 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3745000 դրամ, «ՄՃՓ» ՏՄ).

14) դռան էլեկտրոնային քարտեր (10000 հատ՝ 2 տեղ, 62 կգ ընդհանուր քաշով, 7200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 495 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

14/4.8

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

17. 09. 11 թ. № 3/3.8-2/84718-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.09.2011թ. N15/15.6/15260-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

17. 09. 11 թ.

№ 034/28113-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 14/4.8

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

16. 09. 11 թ.

№ ՆՆ/3-6/6598-11

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 15-ի համար 15/15.6/15260-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

16. 09. 11 թ.

№ 044/28047-11

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2011 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

14/4.9

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի -ի N ՖԲ/ԱնՄ-4/ -11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (144 տեղ, 5800 կգ ընդհանուր քաշով, 78100 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5950 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, Շիրակի ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» (2011 թվականի հունվարի 21-ի N Մ-007-Ա որոշման խմբագրությամբ) N Մ-896-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ**
(Container No MSCU 3418562)

14/4.9

| Հ/Հ | Ստացող կազմա-կերպություն | Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ) | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք $ | Ընդհանուր արժեք $ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տիրամայր Հայաստանի Կենտրոն-Գյումրի (մոտ 350 շահառու) | 3 | 3 արկղ (54 զույգ) | կոշիկ | 9.3 | 500 |
| 2. | Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 300 շահառու) | 46 | 8 արկղ (800 զույգ) | գուլպա | 1.5 | 1200 |
| | | | 5 արկղ (150 հատ) | պայուսակ | 16.7 | 2500 |
| | | | 30 փաթեթ (9000 մետր) | անկողնային կտոր | 2.8 | 25000 |
| | | | 1 փաթեթ (3 հատ) | պահարան | 250 | 750 |
| | | | 1 փաթեթ (2 հատ) | մահճակալ մատրասով | 225 | 450 |
| | | | 1 փաթեթ (1 հատ) | կլոր սեղան | 200 | 200 |
| 3. | Զոհված ազատամարտիկի ընտանիք (մոտ 1400 շահառու) | 30 | 3 արկղ (90 հատ) | կիսաշրջազգեստ | 16.7 | 1503 |
| | | | 12 արկղ (432 հատ) | տաբատ | 12.1 | 5230 |
| | | | 10 արկղ (320 հատ) | սվիտր | 14.06 | 4500 |
| | | | 5 արկղ (600 հատ) | մայկա | 3.6 | 2160 |
| 4. | Կույրերի միավորում (մոտ 1400 շահառու) | 30 | 3 արկղ (90 հատ) | կիսաշրջազգեստ | 16.7 | 1503 |
| | | | 12 արկղ (432 հատ) | տաբատ | 12.1 | 5230 |
| | | | 10 արկղ (320 հատ) | սվիտր | 14.06 | 4500 |
| | | | 5 արկղ (600 հատ) | մայկա | 3.6 | 2160 |
| 5. | Գյումրու կարիքավոր ընտանիքներ (մոտ 1000 շահառու) | 35 | 13 արկղ (130 հատ) | բաճկոն | 84.6 | 11000 |
| | | | 8 արկղ (288 հատ) | տաբատ | 12.1 | 3486 |
| | | | 10 արկղ (320 հատ) | սվիտր | 14.06 | 4500 |
| | | | 4 արկղ 480 հատ) | մայկա | 3.6 | 1728 |

Այս բեռի ընդհանուր քաշն է 5800 (հինգ հազար ութ հարյուր) կգ, արժեքը՝ $ 78.100.00.00 (յոթանասունութ հազար հարյուր ԱՄՆ դոլար), ճանապարհածախսը կազմում է $ 5,950.00 (հինգ հազար ինն հարյուր հիսուն ԱՄՆ դոլար):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

14/4.9

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

23.09.11 № 3/3.8-2/85008-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.09.2011թ. N15/15.1/15403-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-896-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/28654-11

Կատարող՝ Ս.Այվազյան, հեռ. 595-227

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/4.9

«22» 09 2011 թ. N ՖԲ/ԱՀՄ-5/7704-11

Ձեր 2011-09-19, 15/15.1/15403-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-895-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝** **Ֆ. Բերիկյան**

040/28478-11

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 14/4.9

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԱ/3-6/6650-11
19.09.11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 19-ի համար 15/15.1/15403-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-895-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/28263-11

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

***Նախագիծ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**----- ------------ 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

14/4.10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N Մ-438-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N3/3.8-2/84870-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ՀՔ/22/8701-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի N ԱԱ//3-6/6640-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Հայ բժիշկներ» միության կողմից «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով Նիդերլանդներից ստացված բեռը (դեղ՝ «Sodium valproate 150 mg», 3 արկղ, 32 կգ ընդհանուր քաշով, 5200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 450 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի «Էպիլեպսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտություն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագրի մասին» N Մ- 438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

14/4.10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.09.11թ №3/3.8-2/84870-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.09.2011թ. N15/15.4/15401-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

N034/28355-11
20.09.11թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

14/4.10

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

22.09.11 № ՀՓ/22/8701-11

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.09.2011թ. թիվ 15/15.4/15401-11 գրության կապակցությամբ՝ «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝ Ա.Մկրտչյան
Հեռախոս 52 27 21

N020/28463-11
22.09.11թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/4.10

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7 N 2/2/13-6/6640-11 19.09.11թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 19-ի համար 15/15.4/15401-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

N 044/28232-11
29.09.11թ.

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

14/5.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/84834-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/6567-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն - 95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2011 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N CC-11-08-001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտաքին ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների իրականացում՝ 8006440 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

14/5.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

20.09.11թ. №3/3.8-1/84834-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.09.11թ. N 15/15.6/15184-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. փետրվարի 18-ի N Մ-041-Ա («Հայկական բարեգործական ընդանուր միության Հայստանի ներկայացուցչություն») որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

20.09.11թ.

№ 034/28295-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 14/5.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

16.09.11թ.

№ ԱՆԱ/3-4/6567-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. թիվ 15/15.6/15184-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի NՄ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

16.09.11թ.

№ 044/27965-11

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2011 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

14/5.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-885-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի –ի N 3/3.8-1/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից իրականացվող «Պետության կարիքների համար տուբերկուլյոզով հիվանդների սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-885-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «31 հուլիս 2011» բառերը փոխարինել «25 դեկտեմբեր 2011» բառերով:

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյանի 21, ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մանասե Ծառուկյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 22602005) 2011 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը նշված ապրանքների մատակարարում՝ 3837500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արտավազդ Ամրոյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 35052448) 2011 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը նշված ապրանքների մատակարարում՝ 1332520 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՍԻՍ Նատուրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04412776) 2011 թվականի օգոստոսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը նշված ապրանքների մատակարարում՝ 1887600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

09.09.2011թ. № 3/3.8-1/84329-11

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.09.11թ. N 15/15.6/14612-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-471-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն) որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի («Հազարաշեն» արտադրական կոոպերատիվի հետ կնքված պայմանագրեր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/27402-11
09.09.2011թ.

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/5.12

N: ԱԱՀ/3-4/6274-11
05.09.2011թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.09.2011թ. թիվ 15/15.6/14612-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի NՄ-471-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/26978-11
05.09.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** 14/5.13
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-567-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-ԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-1/84410-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ԱԱ/3-4/6428-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի խմելու ջրի խողովակաշարի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-567-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «19125000 դրամ» բառերը փոխարինել «15923146 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «19125000 դրամ» բառերը փոխարինել «15923146 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04600132) 2011 թվականի օգոստոսի 19-ին կնքված՝ N WVA/VAR VAR/CW-11/002 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խողովակաշարի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 15923146 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

14/5.13

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

13.09.2011թ. № 3/3.8-1/84410-11

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 06.09.11թ. N 15/15.6/14818-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի Մ-567-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն) որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի («Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/27600-11
13.09.2011թ.

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/5.13

№ ԱԱ/3-4/6428-11
09.09.2011թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.09.2011թ. թիվ 15/15.6/14818-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի NՄ-567-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/27506-11
09.09.2011թ.

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ - -Ա** 14/5.14
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-570-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**<u>(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)</u>**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-1/84418-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ԱԱ/3-4/6429-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր և Շատջրեք համայնքներում խաղահրապարակների կառուցում» ծրագրի մասին» N Մ-570-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «3700000 դրամ» բառերը փոխարինել «3131000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «3700000 դրամ» բառերը փոխարինել «3131000 դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետում «1800000 դրամ» և «1900000 դրամ» բառերը փոխարինել «1565500 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2011 թվականի օգոստոսի 12-ին կնքված՝ N WVA/VARD ADP/PG-11/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղասարքերի մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3131000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

14/5.14

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

13.09.2011թ. № 3/3.8-1/84418-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.09.11թ. N 15/15.6/14819-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի Մ-570-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն) որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի («Մագնոն» ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/27604-11
13.09.2011թ.

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/5.14

№: ՆԱԿ/3-4/6429-11
09.09.2011թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.09.2011թ. թիվ 15/15.6/14819-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի ՆՄ-570-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/27502-11
09.09.2011թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

14/5.15

___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ -    -Ա

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-571-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-1/84419-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ԱԱ/3-4/6427-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքի ոռոգման համակարգի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-571-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «5675625 դրամ» բառերը փոխարինել «5427825 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «5675625 դրամ» բառերը փոխարինել «5427825 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դելտա-ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08416387) 2011 թվականի օգոստոսի 20-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CM-11/001/LOT2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 5427825 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

14/5.15

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.   (+374 10)  59 52 26

13.09.2011թ. № 3/3.8-1/84419-1

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.09.11թ. N 15/15.6/14821-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի Մ-571-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն) որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի («Դելտա-ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/27605-11
13.09.2011թ

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/5.15

№ ԱԱ/3-4/6427-11
09.09.2011թ.


0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05


ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.09.2011թ. թիվ 15/15.6/14821-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի NՄ-571-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/27505-11
09.09.2011թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա 14/5.16
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-572-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-1/84416-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ԱԱ/3-4/6430-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք համայնքի մանկապարտեզի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-572-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «31875000 դրամ» բառերը փոխարինել «27210057 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «31875000 դրամ» բառերը փոխարինել «27210057 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԲՆՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07613114) 2011 թվականի օգոստոսի 20-ին կնքված՝ N WVA/VAR ADP/RW-11/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 27210057 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

14/5.16

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

13.09.2011թ. № 3/3.8-1/84416-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.09.11թ. N 15/15.6/14820-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի Մ-572-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն) որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի ( «ԲՆՎ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/27630-11
13.09.2011թ.

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

14/5.16

№ ՆԽԿ/3-4/6430-11
09.09.2011թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.09.2011թ. թիվ 15/15.6/14820-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի NՄ-572-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/27501-11
09.09.2011թ.

*<u>ՆԱԽԱԳԻԾ</u>*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա 14/5.17
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-573-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-ԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**<u>(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)</u>**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-1/84417-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ԱԱ/3-4/6414-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի թիվ 4 միջնակարգ դպրոցի սանհանգույցի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-573-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «3787500 դրամ» բառերը փոխարինել «3673940 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «3787500 դրամ» բառերը փոխարինել «3673940 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման սթոուն սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2011 թվականի օգոստոսի 19-ին կնքված՝ N WVA/VAR ADP/RW-11/003 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3673940 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

14/5.17

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

13.09.2011թ. № 3/3.8-1/84417-1

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.09.11թ. N 15/15.6/14822-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի Մ-573-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն) որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի («Արաման սթոուն սթայլ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/27603-11
13.09.2011թ.

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/5.17


0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05


№ ԱԱ/3-4/6414-11
09.09.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.09.2011թ. թիվ 15/15.6/14822-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի NՄ-573-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/27483-11
09.09.2011թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

------------- 2011 թվականի N Մ- -Ա 14/6.1
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N Մ-571-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2011 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1422 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվակա-նի սեպտեմբերի 23 -ի N 3/3.8-1/85030-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առ-ընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-4/6074-11 եզրակա-ցությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-մակարգման հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 14-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գնորգյան հոգևոր ճռմարանի 2-րդ մասնաշենքի կառուցումծրագրի մասին» N Մ-571-Ա որոշման (2011 թվականի ապրիլի 1-ի N Մ-191-Ա որոշման խմբագրու-թյամբ) մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետում «489.324.120 դրամ» բառերը փոխարինել «510.622.220 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «489.324.120 դրամ» բարերը փոխարինել «487.399.220 դրամ» բառերով:

2. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամ-փոփ տեղեկություններ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշա-պատի քաղաքապետին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

14/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

23.09.11թ № 3/3.8-1/85030-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.05.11թ. N 1592 գրության և ի լրումն մեր 31.08.2011թ N 3/3.8-1/83891-11 գրության՝ կապված (<<Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին>>) <<Գևորգյան հոգևոր ճեմարանի երկրորդ մասնաշենքի կառուցման>> ծրագրի լրամշակված տարբերակի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

N 034/28682-11
23.09.11թ

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
### ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
### ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.1

N 2424/3-4/6074-1
29.08.11թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 25.08.2011թ. թիվ 15/15.8/14194-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 14-ի ՆՄ-571-Ա որոշման մեջ ու որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

N 044/26246-11
29.08.11թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**սեպտեմբերի 2011 թվականի N Մ – - Ա** 14/6.2
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ- 041 -Ա ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ- 525-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն )**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 6-ի N 3/3.8-1/84173-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6279-11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմանը կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կից ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «30000000 ՀՀ դրամ» բառերը փոխարինել «35000000 ՀՀ դրամ» բառերով, իսկ «550000000 ՀՀ դրամ» բառերը՝ «545000000 ՀՀ դրամ» բառերով.

2) կից ծրագրի 10-րդ կետում ««ՋԼՋ Պրոյեկտ Քոմփանի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01571399)» բառերը փոխարինել ««Հորիզոն-95» (ՀՎՀՀ՝ 00801721) ՍՊԸ-ի» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» N Մ-525-Ա որոշման 1-ին կետում ««Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500241)» բառերը փոխարինել ««Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721)» բառերով, իսկ «27036050 դրամի» բառերը՝ «34997990 դրամի» բառերով:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

14/6.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

06.09.2011թ. №3/3.8-1/84173-1:

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.09.11թ. N 15/15.6/14569-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-525-Ա (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն) որոշման մեջ փոփոխություն կատարելու հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

[signature]

Ատոմ Ջանջուղազյան

034/27081-11
06.09.2011թ.

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

14/6.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ ԱԱ/3-4/6279-11
05.09.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.09.2011թ. թիվ 15/15.6/14569-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի NՄ-525-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր մության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացած «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն էլեկտրական ենթակայանի տեղափոխման գործարքի արժեքը կազմելու է մոտ 35,0 մլն դրամ, այն դեպքում, երբ վերը նշված ծրագրի 9-րդ կետի բ) ենթակետի համաձայն ենթակառույցների տեղափոխման աշխատանքների համար ծրագրի բյուջեից նախատեսված է ծախսել 30,0 մլն. դրամ: Ուստի հասկանալի չէ, թե ինչ միջոցներից են իրականացվելու ավելացվող շուրջ 5,0 մլն դրամի աշխատանքները:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում որոշման նախագծում ներկայացված փոփոխությունը համապատասխանեցնել ծրագրին:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/26974-11
05.09.2011թ.

**AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbuny@agbu.org • W: www.agb
ARMENIAN REPRESENTATION
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ
9 Alex Manoogian St., Yerevan 0070, Armenia
Tel: (+374 10) 51-22-51; Fax: (+374 10) 51-22-52; Email: agbuarm@agbu.am

14/6.2

22 սեպտեմբերի, 2011թ.

Տիար Սիմոն Տեր-Սիմոնյան
ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ

Հարգելի պարոն Սիմոնյան,

Ի լրումն 2011թ. օգոստոսի 30-ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) կողմից ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ուղղված նամակի և ի պատասխան Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից 05.09.2011թ. թվակիր N ԱԱ/3-4/6279-11 նամակում արված առաջարկի հայտնում ենք, որ ՀԲԸՄ-ն «Երևանյան Կենտրոնատեղի կառուցման» ծրագրի 9-րդ կետում սահմանված ֆինանսական միջոցների ծավալների պարզաբանման մեջ բ/ ենթակետով սահմանված «տարածքում գտնվող ենթակառույցների տեղափոխման աշխատանքները» կազմակերպելու համար նախատեսել էր 30 միլիոն ՀՀ դրամ՝ ելնելով «Երևան Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված աշխատանքային ծավալաթերթի:

Աշխատանքները կատարելու ընթացքում սակայն հայտնաբերվեցին բազմաթիվ ստորգետնյա մալուխներ, որոնք աշխատանքների կատարման նախահաշվային փուլում նախատեսված չեն եղել, ինչի հետևանքով և ՀԲԸՄ-ն ունեցավ մոտ 5 միլիոն ՀՀ դրամի գերածախս:

Հայտնում ենք նաև, որ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից 18 փետրվարի 2011 թվականի N Մ-041-Ա որոշմամբ բարեգործական որակված «ՀԲԸՄ երևանյան կենտրոնատեղի կառուցման» ծրագրի 9-րդ կետի գ/ ենթակետով նախատեսված Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցման համար նախատեսված հողային աշխատանքները իրականացվել են ավելի սեղմ բյուջեով, ինչի արդյունքում ՀԲԸՄ-ն ունեցել է խնայողություն և վերոհիշյալ 5 միլիոն ՀՀ դրամը վճարել է այդ խնայողությունից:

Միաժամանակ ուզում ենք տեղեկացնել նաև, որ թեև ՀԲԸՄ-ի կողմից ներկայացված ծրագրի 10-րդ կետի երկրորդ ենթակետով սահմանված էր, որ ենթակառույցների տեղափոխման աշխատանքները իրականացվելու են «ՋԼՋ Պրոյեկտ Քոմփանի» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության արդյունքում, իրականում այդ աշխատանքները ~~ՀԲԸՄ-ն հանձնարարել է~~ «Հորիզոն-95» ՍՊԸ-ին:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
094/28521
«22» 09 2011թ.

**CENTRAL BOARD OF DIRECTORS:**
**PRESIDENT** - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - SINAN SINANIAN. **TREASURER** - SAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PAPAZIAN.
**HONORARY MEMBER** - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.
**MEMBERS** - *United States:* M. MICHAEL ANSOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASRALIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEKJIAN, ARDA HARATUNIAN, SARKIS JEBEJIAN, LEVON NAZARIAN, JOSEPH OUGHOURLIAN, DICKRAN TEVRIZIAN, YERVANT ZORIAN. *Argentina:* RUBEN KECHICHIAN. *France:* ARIS ATAMIAN. *Switzerland:* VAHE GABRACHE. *Syria:* VASKEN YACOUBIAN.
**COUNCIL OF TRUSTEES** - SARKIS DEMIRDJIAN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNIG YACOUBIAN.
**IN MEMORIAM** - BOGHOS NUBAR, *Founder;* ALEX MANOOGIAN, *Honorary Life President.*

**AGBU**

14/6.2

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր կարգադրությունը ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից 18 փետրվարի 2011 թվականի N Մ-041-Ա որոշման 9-րդ կետի բ/ և գ/ ենթակետերում կատարելու 5 միլիոն ՀՀ դրամի փոփոխություն՝ համապատասխանաբար ավելացնելով նշված գումարը բ/ ենթակետում և նվազեցնելով գ/ ենթակետում: Ինչպես նաև կատարել նույն գումարի չափով փոփոխությունը 10-րդ կետի երրորդ և չորրորդ ենթակետերում՝ համապատասխանաբար ավելացնելով երրորդում և նվազեցնելով չորրորդում:

Կից ներկայացնում եմ վերոհիշյալ որոշման պատճենը:

Կանխահայտ շնորհակալությամբ և հարգանքներով՝

Աշոտ Ղազարյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրեն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ-041-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 3/3.8-1/917-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 01/14-3.2-64/662-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի փետրվարի 7-ի N 01/13.2/307-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/649-11 և Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի փետրվարի 7-ի N 02/34-1575հ եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող՝ 2132200000 դրամ ընդհանուր արժեքով «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Չիլինգարյան դիզայն քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080913) 2010 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հողային աշխատանքների իրականացում՝ 38998620 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նարեկ Սարգսյան» ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 01550435) 2010 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված՝ N 30/11/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային և հեղինակային հսկողության աշխատանքների իրականացում՝ 52200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

14/6.2

Հայաստանի ներկայացուցչության տնօրեն Աշոտ Ղազարյանի կողմից

«27» հունվարի 2011թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի, Մելիք Ադամյան 2/2 հասցեում 1307,51 քմ հողատարածքում կառուցել սփյուռքի համահայկական խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատեղի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյա ավտոկայանատեղի՝ ՀՀ կառավարության համար: |
| Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղի կառուցելու նպատակն է ՀԲԸՄ հայրենիքում իրականացվող ծրագրերի, այդ թվում սփյուռքի հայրենակիցների համար և իրականացվող ծրագրերի համար շենքային պայմանների ապահովելը: Նոր շենքային պայմանները հնարավորություն կտան առավել որակյալ և արդյունավետ կազմակերպել ՀԲԸՄ-ի Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող թե երկարաժամկետ (ամենամյա, շարունակական բնույթ կրող), թե կարճաժամկետ, և թե մեկանգամյա հատուկ հանդիպումների տրամադրման բազմաթիվ ծրագրերը իր բազմաթիվ շահառուներին և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում: |
| Բարեգործը | Անհատ սփյուռքահայ բարերարներ պարոն Պերճ Սեդրակյան և պարոն Նազար Նազարյան: |
| Ծրագիրը կատարողը | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ), ի դեմս ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության.<br>40 Մարշալ Բաղրամյան, Երևան 0070<br>ՀՎՀՀ 00006479 |
| Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Ադամյան 2/2 փողոց:<br>Ծրագիրը ընդգրկում է քաղաքաշինության բնագավառը: |
| Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 2 132 200 000 (երկու միլիարդ հարյուր երեսուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: |

2/9

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք,<br><br>-ՀԲԸՄ Վիրտուալ Հայկական համալսարանն իր ծրագրավորման և դասավանդման բաժիններով,<br>- երիտասարդական ծրագրերը,<br>- «Բացահայտիր Հայաստան» անչափահաս սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամավոր աշխատանքի ծրագիրը,<br>- «Անդրանիկ» սկաուտական բանակումի ամենամյա կազմակերպման ծրագիրը ՀՀ Լոռու մարզում,<br>- սփյուռքահայերի համար նախատեսված ներգնա ամառային պրակտիկայի ծրագրերը,<br>- Հայաստանում սկաուտական շարժման ծրագիրը,<br>- «Ուսուցում արտասահմանում» հայազգի ուսանողների համար ծրագիրը,<br>- ՀԲԸՄ հարյուրամյա պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարան -արխիվը,<br>- ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը:<br><br>ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրը նախատեսվում է սկսել 2010թ. դեկտեմբերին և ավարտել 2013թ. դեկտեմբեր ամսին: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով.<br><br>ա) ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր- 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հեղինակային վերահսկողություն (2011 թ. հունիս- 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52 200 000 ՀՀ դրամ:<br><br>բ) տարածքում գտնվող ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների և այլն) տեղափոխման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր- 2011թ. մայիս ամիսների ընթացքում - 30 000 000 ՀՀ դրամ:<br><br>գ) Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2011թ. հուլիս ամիսը - 550 000 000 ՀՀ դրամ:<br><br>դ) Ընդհանուր շինարարության աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2013թ. դեկտեմբեր ամսին- 1 500 000 000 ՀՀ դրամ: |

| | | | |
|---|---|---|---|
| . | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2010-2011 թվականների համար նախատեսվում է ձեռք բերել ներքոնշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 632 200 000 ՀՀ դրամ: | |
| | | «Նարեկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղիի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի նախագծում | 52 200 000 ՀՀ դրամ |
| | | «ՋԼՋ Պրոյեկտ Քոմփանի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01571399) հետ համատեղ գործունեության ծավալելու համար համաձայնագրի շրջանակներում կոմունիկացիոն ցանցերի (ՀՀ Ազգային անվտանգության, ՀՀ արտակարգ իրավիճակների, Արմենթել Բիլայնի, Մետրոպոլիտենի և հարակից այն կազմակերպությունների կապի ցանցերի մալուխների) տեղափոխման նպատակով:ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների, այդ թվում ՀՀ Ազգային անվտանգության, ՀՀ արտակարգ իրավիճակների, Արմենթել Բիլայնի, Մետրոպոլիտենի և հարակից այն կազմակերպությունների կապի ցանցերի մալուխների, գազի և այլն) տեղափոխման աշխատանքների իրականացում | 30 000 000 ՀՀ դրամ |
| | | Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար: | 550 000 000 ՀՀ դրամ |
| . | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում | |
| . | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան, ՀՀ Քաղաքաշինության նախարարություն, ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն | |
| . | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | | |

կազմեց՝ Լենա Բաղդասարյան
հեռախոս՝ 51-22-50, 51-22-51

14/6.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 հուլիսի 2011 թվականի N Մ-525-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 24-ի N 3.8-1/80748-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 28-ի N 3/3-4/4475-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն - 95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500241) 2011 թվականի մայիսի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական ենթակայանների տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 27036050 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմանը կից ծրագրում և 2011 թվականի հուլիսի 1-ի Մ-525-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի NՄ-525-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր մության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.<br><br>Կից ներկայացված «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն էլեկտրական ենթակայանի տեղափոխման գործարքի արժեքը կազմելու է մոտ 35,0 մլն դրամ, այն դեպքում, երբ վերը նշված ծրագրի 9-րդ կետի բ) ենթակետի համաձայն ենթակառույցների տեղափոխման աշխատանքների համար ծրագրի բյուջեից նախատեսված է ծախսել 30,0 մլն. դրամ: Ուստի հասկանալի չէ, թե ինչ միջոցներից են իրականացվելու ավելացվող շուրջ 5,0 մլն դրամի աշխատանքները:<br>Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում որոշման նախագծում ներկայացված փոփոխությունը համապատասխանեցնել ծրագրին: | Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությունը 2011 թվականի սեպտեմբերի 22-ի գրությամբ տվել է պարզաբանում և առաջարկել է համապատասխան փոփոխություններ կատարել նաև ՀՀ ԿԲԾՀՀ-ի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմանը կից ծրագրում: Հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության առաջարկը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների դիտողությունը՝ որոշման նախագիծը խմբագրվել է: |

14/6.2